

Մմբատ. — Կ'երկում ես ալ որ ան-
մեղ եմ...

Ոստիկան. (Խտախ նայելով Մմբատին,
եւ ապա հեզօրօքն) Ո՛հ, ի՞նչ անմեղ հրեշ-
տակ... անա քեզի նման պրեն սպիտակ
հրեշտակներն ու ներսէն սև սատանաները
խիղճ չեն ըներ քանկի 3000 մանկեթները
գողնալ ու կուլ տալ մէկ շնչով՝ իբրև պոս-
մը կաթիլ մը ջուր ըլլար...

Մմբատ. — Ի՞նչ կ'ըսէք... ես գողցեր
եմ... ես գող եմ... Մուշէ՞ղն ըսաւ այդ
բանը...

Ոստիկան. — Չէ՛ չէ՛, Մուշեղը չը-
սաւ... Մուշեղը թէ ինքզինքն է թէ գրեզ
անմեղ կը քորոզէր... բայց զո՛ւր տեղ...

մտիկ ընող չկայ... Մուշեղի գրած նամակդ,
Մմբատ, երկուքնիդ ալ կը դատապարտէ...
Մուշեղի գրականէն զոնուած նամակդ փողը
գողնալու մասին գրուած... անմեղ հրեշ-
տակներ (ժաղրելով)... հէ՛, Աստուծոյ ար-
դարութիւնը այսպէս ձեր քնչ սատանաներ
ըլլալը կը յայտնէ... Երթանք, քաշեցէք
զինուորներ...

Մմբատ. — Աստուած արդար, զու-
գիտես որ անմեղ եմ, դուն վկայ ես, քեզի
կը բողբոսէմ, տես և արդարութիւնդ յայտ-
նէ. (կ'ելլին):

Ծարօ. — (Դժգոհ. — Բախտս,
չնորհակալ եմ քեզնից... վազեմ Գարե-
ղինին իմաց տալ. (կ'ելլէ շտապաւ)):

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԻՏԱԼԻԱ

Վ Ե Ն Ե Յ Յ Ե Վ

— * * * —

Մուտք ի վեներտիկ. — Լճակը. — Շրջագայութիւն վեներտիկոյ մէջ. — Մեծ քրանցքն. —
Սուրբ Մարկոսի հրապարակն. — Դքսական պալատն:

Խաչիոյ քովանգակ քաղաքացի մէկ վե-
ներտիկ իւր եախկին հասարակապետութեան
պատմական անբիշ վեհ յիշատակներով, իւր
պեպսեւ գեղարուեստական հրաշակներուն-
ով, իւր լեռնաբարձիկ տեսչեամբ և դրիւք,
և իւր քարեխառն կլիմայիս եղեր է միշտ
հոյակապ և ախորժելի քաղաք մի, ինչպէս
իւր բնիկ ժողովրդոց, նոյնպէս և իւր հե-
տաւոր այցելուաց. որունք՝ յետ միանգամ
տեսնելու զայն, և իւր հրաշակներուց վրայ
գնայելու, դժուարաւ և չկամոքեամբ կար-
ծես կը մեկնին նորա ընտանոքեայ ժով-
ափոնքէն: Թիրաշի, մօտ ժամանակներս քա-
շական գրութիւնք եղան այս քաղաքիս վրայ
օրագրաց մէկ կամ ասանձին մատենաներով,
սակայն անոնք չոյ հարեանցի տեղեկութիւնք
միայն կրնան համարուիլ: Երկրայ գրա-

րիւնս՝ որ արդի դարուս բազմահմուտ գաղ-
ղացի հեղինակի մը գրչին արդիւնք է՝ այն
ինքն է Հիպպոլիտ—Ատոյի Տէն, բոլորու-
վին տարրեր ոճով է: Հեղինակն իւր այս
գրութեան մէջ կարծես իբրև ի պատկերի
կը ներկայացնէ զվեներտիկ, նկարագրելով
զայն իւր քովանգակ բանաստեղծական խառ-
նով, պերճախօսական կորովով, հմուտ
տեղեկութեամբ, քաղցր և ախորժելի
ոճով: Հեղինակիս այս երկախորհրդան-
ունը տեսալ գրութիւն մի չէ ևս նախապար-
հորդելով Խաչիոյ քովանգակ նշանաւոր
քաղաքները, զանոնք մի աս. մի նկարա-
գրեր է, և որոյ ամբողջութիւնը անուանած է
Ճանապարհորդութիւն յիսալիա, յորոց միայն
վեներտիկոյ մասն ընտրելով՝ քաղցրանքեամբ

հատուած հպատուած կը ներկայացնենք Քաղ-
մայիկայի ընթերցողաց, իբր ձաշակ մի քաղ-
մահեւոս Հեղինակին գրութեան ունոյն. յոս-
տայով միանգամայն քե ախորժով՝ պիտի
ընթերցանան, որով և աւելոյալ լաւ գաղափար
մի պիտի տեսնան գրողին մեծ հանձնարոյն
վրայ: Չենք ուզեր դուրս քողոյզ ճան. Հե-
ղինակին վննետեան նկարարեան վրայ
առանձինն գրած տեղեկութիւնքը, գորս և
անմիջապէս կը կրցէ իւր վննետեոյ նկարա-
գրին:

Հ. Եփրեմ. Ապրոյեան

20 ապրիլ 1864

Երկաթուղին կը մտնէ լճակաց մէջ, և
խտոյն տեսարանն անսովոր երեւոյթ է գոյն
մը կ'առնու: Այլ ևս չեն տեսնուիր ոչ դա-
շարիք և ոչ ծառք, ամենայն ինչ ծով է և
աւազ. անծայր հորիզոնին վրայէն վեր կը
բարձրանան ցած և տափաքակ աւազակոյտք,
որոց մի քանին կէս մը թըլած է ալիքն:
Թեթեւ հով մը կ'երերէ փայլուն ջրաշեղ-
ները, և մանրիկ ալիքներն ամեն վայրեան
կու գտն կը մեռնին հարթ աւազին վրայ:
Արեւն ի մուտս խոնարհած պահուն կը ներկէ
զատոնք ծիրանեգոյն, զորս և ալեաց ուռիչ
երբեմն կը մթազնէ երբեմն կը փայլփայցնէ:
Այս անդադար շարժմամբ բոլոր գոյներն կը
փոփոխուին և կը խառնուին: Գորշ կամ ա-
ղիւտագոյն յատակք կը կապուակին կամ կը
կանաչանան զիրենք ծածկող ծովէն. երկնքի
երեւութից համեմատ կը փոփոխուին աւ ջուրն,
և այս ամենն կը խառնուի լուսոյ վտակաց
մէջ, ոսկի հատիկներու ձեւով՝ որոնք թիթե-
ղապատ կը ծածկեն մանրիկ ալիքները, ար-
ծաթի ոլորտածներու ձեւով՝ որոնք ծոպերով
կը պատեն պտուղաւոր ջրոյն կատարները,
առաւ նշողներու և յանկարծական փայլ-
մանց ձեւով, զորս կը ցոլացընէ ծածանման
մը մակերեւոյթն: Ալիքն սահմանն և վարժու-
թիւնք կը փոփոխուին և կը նորոգուին: Տե-
սութեան զգայարանք ուրիշ աշխարհ մը կը
գտնեն: Հաստատուն երկիրներու թանձր
պայծառ և չոր գոյներու տեղ, վէտ վէտ ցոլա-

ցումն մի, կակղութիւն մի և երանգներու
անընդհատ պայծառութիւն մի կը ձեւացընեն
ուրիշ երկրորդ երկիրք մը, նոյնպէս լուսաւոր,
բայց աւելի տարբեր, աւելի փոփոխական,
աւելի ճոխ և աւելի սաստիկ քան զմիւսն,
պէսպէս գոյներէ ձեւացած, որոց խառնուր-
դըն ներդաշնակութիւն մի կը կազմէ: Ժա-
մեր պէտք կ'ըլլայ անցընել՝ դիտելու համար
լուսոյ այս աստիճանաբար նուազումները, այս
գունոց խառնուրդները, այս պայծառութիւնը:
Եւ մի թէ ամեն օր դիտուած այս տեսա-
րանն չէ, մի թէ յակամայս իրեւ ուսուցիչ
ընդունուած այս բնութիւնն չէ, մի թէ ի-
րաց այս ալեծուփ և հեշտալի արտաքին
երեւոյթներով բռնի տողորուած երեւակայու-
թիւնն չէ, ոսկից յառաջ եկած է վննետե-
կեցեաց գոյներու խառնուրդն:

21 ապրիլ

Օրական շրջադաշնութիւն մի գնդողայի մէջ.
նախ պէտք է պտտիլ և ապա տեսնել ամ-
բողջութիւնը:

Այս իտալոյն մարգարիտն է, որուն նմանը
բնու տեսած չեմ. քաղաք մը միայն զիտեմ,
որ շատ հեռուէն և միայն նարտարապետու-
թեան մասով ասոր կը նմանի, որ է Ոքս-
ֆորդ: Բովանդակ թերակղզոյն մէջ աննման
է: Երբ կը յիշէ մարդ Հոլովմայ և Նեապոլ-
ոյ ազանդէ փողոցները, երբ կը յիշէ փո-
րենտիոյ և Սիենայի ցամաք և նեղ փողոց-
ները, և յետոյ երբ կը դիտէ այս մարմա-
րեայ պաշտները, այս մարմարեայ կամուրջ-
ները, այս մարմարեայ եկեղեցիները, և
գոթական, մուրիտանական և բիզանդական
տեսանք, պատշգամբներու, պատուհաններու,
քիւերու այս հրաշալի բանաւածքը, և շար-
ժուն ու փայլկումն ջրոյ համատարած երեւոյ-
թը, կը հարցնէ ինքն իրեն, թէ ինչո՞ւ համար
խկոյն այս տեղ եկած չէ, ինչո՞ւ համար
երկու ամիս կորսնցուցեր է ուրիշ քաղաքաց
մէջ, ինչո՞ւ համար բոլոր ժամանակը վննե-
տիկ անցուցած չէ: Դիտաւորութիւն կը գնէ
հոն բնակութիւնը հաստատելու, կ'երգնու որ
հոն կրկին անգամ պիտի գայ. առաջին ան-
գամ կը քարմանայ ոչ միայն հագուել, այլ

նաեւ սրտով, զգայարանքներով և բոլոր ան-
ձամբ : Այլ եւս ինքզինքն երջանիկ կը կարծէ .
կ'ըսէ ինքն իրեն, թէ կեանքն գեղեցիկ և
և բարի : Բաւական է իրեն միայն այլքերը
բանալ, պէտք չկայ տեղէն իսկ շարժելու,
գոնդողան անզգայի շարժմամբ յառաջ կ'եր-
թայ : Սէլը բնկողմանած՝ նա ամբողջովին կը
թողու երթալ ինքզինքը, հողին և մար-
մինը : Խոնու և անուշիկ հով մը կը փայ-
փայէ իւր այտերը : Զրանցքին ընդարձակ
մակերեսութիւն վրայ՝ կը ծածանին գովութեան
և առաւօտեան լուսութեան մէջ հանգչող պա-
լատներու վարդազոյն կամ օպիտակաթոյր
պատկերներն : մարդ ամեն ինչ կը կը մոռ-
նայ, իւր հարուստը, իւր գիտաւթութիւնն-
քը, իւր անձն անգամ : կը դիտէ, կ'ամ-
փոփոխի, կը վայելէ, իբր թէ յանկարծոյն
կեանքէն ազատած օգային վերը իրաց վրայ
ստաւանէր լուսոյ և կապուտակի մէջ :

Մեծ ջրանցքն կ'երկընցնէ իւր կորագիծը
երկու կարգ պալատներու մէջ, որոնք, իւրա-
քանչիւրն առանձինքն և իրեն համար կատու-
ցուած, պատահմամբ ժողովրդ եւն իրենց զա-
նազանութիւնները զայն գեղեցկացնելու հա-
մար : Մեծաւ մասամբ միջին դարու են,
առաւոյտաձեւ կամարանիւն պատահաններով,
ծաղկաձեւ և վարդակեղծ պարդուք գրու-
ղեալ պատշգամներով : զոթացի ճոխ երեւա-
կայութիւնն կը փայլի իրենց մարմարեայ ժա-
նեկին մէջ՝ առանց բնաւ տխուր կամ տձեւ
ըլլալու : իսկ այլք վերածնութեան դարու
գործեր, եռակարգ վրայէ վրայ գեանդուած
սիւներով կը բարձրանան : Թաւկազին և ու
զորկ դուռազուած կը տեսնուին պորփիրն և
օձաբարն դրանց վրայ : Շատ ճակատներ վա-
րդազոյն են և մեղմ երանդներով գունազու-
նուած, և իրենց արարական զարդերն կը
նմանին ցանցակերպ գործուածներու, զորս կը
գծադրէ ալիքն նուրբ աւազին վրայ : Դամա-
նակն դրած է բոլոր այս հին կերպարանաց
վրայ իւր գորշազոյն և խառնուած նշանա-
զգեստը, և առաւօտեան լոյսն չքնաղ կերպով
կը ծիծաղի լայնասփիւռ ջրոյն մէջ :

Զրանցքն կը դառնայ, և ահա իբրեւ ծռ-
վային առճապարկ բուսականութիւն մի, իբրեւ
չքեղ և նորանբանչ սպիտակաթոյր բուսոյ մը,

կը սկսի ջրոյ վրայէն վեր բարձրանալ Սրբ-
բոսնի Մարիամ Գրիգորեան եկեղեցին իւր
գմբէթներով, իւր դեղադէզ քանդակներով և
իւր արձանազարդ ճակատով : քիչ մը հեռուն՝
սրիշ կղզւոյ մը վրայ կը տեսնուի Սուրբ
Գէորգ եկեղեցին, բոլորովին կլորաձեւ և ցը-
ցուած, իբրեւ սատափի շքեղ խեցի մը : Անք
կը զարձնես դէպ ի ձախակողմն, և ահա Սուրբ
Մարկոս, զանգակատունն, հրապարակն, զըջ-
սական պալատն : Հաւանական է, թէ աշ-
խարհիս վրայ չկայ ասոր հաւասար գոհար մը :

Անկարագրելի է հարկ է փորագրի պատ-
կերները տեսնել, և սակայն թնչ են փո-
րագրի պատկերը առանց գունոյ : Հոս զանա-
զան ոճերու խառնուրդ մը կայ : անագին դէզ
մը հրաշալեաց, անբաւ առատութիւն հնարու-
ղէտ ճարտարութեան, որոց վրայոք ընդհանուր
ազօտ գաղափար մի լոկ կրնայ տրուիչ, որչափ
որ զուտան մը կրնայ գաղափար մի տալ
ծաղկազուարճ ծառի մը : Հոս աչքի զարնողն
է ճոխ և բազմադիմ երեսակայութիւն և
խառնուրդն, որ կը կազմէ միանգամայն զա-
նազանութիւն և հակապատկերներ, յորոց
յառաջ կու գայ ներդաշնակութիւն : Երբեւա-
կայեցէք ութ կամ տասն գոհարեղինաց զրգ-
րոցներ փախուած կնոջ մը պարանոցէն և
թեւերէն, որոնք կը միաբանին իրարու իրենց
չքեղութեամբ կամ գեղեցկութեամբ :

Եամարներով և պալատներով շրջապա-
տուած հրաշալի հրապարակն՝ քառակուսի ձեւով
կը տարածէ իւր սեանց անտառը, կորնթա-
կան խոյակները, արձանները, իւր զաւական
ձեւով ընտիր և պէսպէս յօթինուածքը : Հրա-
պարակն ծայրը կը բարձրանայ կէս զօթացի
և կէս բիւզանդացի տաճարն իւր կոնդիլաձեւ
գմբէթներով, սրածայր փոքրիկ զանգակա-
տներով, արձանազարդ կամարակապերով, սիւ-
նապանոց գոտիքներով, միւսիտնադուրաց
կամարներով, զունաւոր մարմարապատ յա-
տակներով, սոկնիփայլ գմբէթներով : Նորաս-
քանչ և խորհրդաւոր սրբաբան, տեսակ մը
քրիստոնէական մկրիթ, ուր կարմորակ ըս-
տուերին մէջ կ'երերան լուսեղէն ճառագայթք,
ինչպէս ոգւոյ մը թեւերն իւր ծիրանի և
մետաղեայ գետնափորին մէջ : Այս ամենն
կը վիտայ և փռւոյ նման վեր կը բարձ-

րանայ : Գրան քայլ անդին , մերկ և ուղիղ՝ նստու մը կայմին նման՝ հսկայ զանգակատունն յերկինս կը բարձրացնէ և հնուէն կ'աւետէ ծովու ճանապարհորդաց վէնետակայ նախկին տէրութիւնը : Իւր սարսուռը իրեն կից Սան-սովինայի նըրարուեստ օթեակն (loggetta) կը նմանի ծաղիկ մը . բազմաթիւ արձաններ , խորաքանդակներ , անազապղինձներ , մարմարիւններ , գեղեցիկ և կենդանի առուեստի բովանդակ շուպլուծիւն և ճարտարութիւն կը խռնին զայն զարգարել : Աստ և անդ քսան նշանաւոր բեկորք քաց օդի մէջ կը կազմեն թանգարան մի և յիշատակավայր մի . սուրբ Յովն . Ալկրայէն բնութած քառանկիւնի սիններն , Կ . Պոլսէ յաւիւրտակուած անազապղինձ չորս ձիւր , անազապղինձ մոյթերն՝ ոտոյ վրայ կը կախուին քաղաքին դրօշներն , կրանիղեայ երկու կողողներ՝ որք իրենց գագաթին վրայ կը կրեն կոկորս-վիլոս մը և հասարակապետութեան թեւաւոր առիւծն , ասոց ուղիւ մարմարեայ ընդարձակ քարափ մի և սանդուղք , ուր շահններով կը կապուի զոնդոյներու խումբն : Այլեքս գէպի ծով կը զարձնես՝ և շնա օւզեր այլ եւս ուրիշ բան տեսնել . Կանաւետեսեայ պատկերաց մէջ եւս կը տեսնուի այն , սակայն քողի միջէն . նկարուած լոյսն՝ բնա իրական լոյս չէ : Ճարտարապետութեանց շուրջը ընծաւ բնարձակուած ջրայն՝ ճապոնոյա կ'երկրնցընէ իւր մոզական շրջանակը , կանաչի զարնոզ կամ կապուտակ գոյները , շարժուն և լըր-թազոյն բիրեղը ք բիր մանրիկ սլեակը կը խաղան և կը փայլին զգիւիտի ազդեցութեամբ , որոց զագաթներն կայծեր կ'արձակեն : Հորիզոնին վրայ , գէպի ք արեւելք Սկլաւոնեան քարափանց ծայրը կը տեսնուին նաւերու կայմեր , եկեղեցեաց գագաթներ և մեծ պարտիդի մը կանաւուծիւնը : Այս առանն լոցոյ միջէն գուրո կ'ելնէ , կը տեսնուի ամեն կողմ ալիքը որ կը մոնէ ջրանցից մէջ , կ'երբայ քարափանց երկայնութեամբ , կ'անհետանայ հորիզոնին վրայ . առօտակի նման կը հոսի առններու մէջ , և կը բլրորի եկեղեցեաց շուրջը : Փայլփլուն , լուսաւոր և շրջապարոյր ծովը կը թափանցէ և կը պատէ գլխնեաթիկ իբրեւ փառք մը :

Ջարդարանքի մը մէջ իբր միակ ազամանդ՝ զնսական պալատն կը նսեմացնէ ձնացեալքը : Այսօր ալ ինչ կ'ուզեմ՝ նկարագրել , կ'ուզեմ միայն զբռնուլ : Ասոր նման ճարտարապետութիւն երբեք տեսնուած չէ . հոն ամեն բան նոր է , պատշաձէն դուրս ելած կը կարծուի . կը հասկընամ , թէ մեր սովորական և զովք հիացնող դասական կամ զոթացի ձեւերէն դուրս կայ ամբողջ աշխարհ մը , և թէ մարդկային հնարագիտութիւնն անսահման է , և թէ կարող է բնութեան նման արամամբել ամենայն կանոն և կատարեալ դործ մը արտադրել այնպիսի ոճով՝ որ բոլորովին ներակ է այն ամենուն , որոց մէջ պէտք էր ամփոփուիլ : Այլի բոլոր վարժութիւնք կը շրջին , և հրապուրչի զարմացմամբ կը տեսնուի հոն արեւելեան երեւակայութիւնն՝ որ լեցունը կը զետեղէ դասարկին վրայ , փոխանակ դաստարկը լեցունին վրայ գետեղելու : Ամբար բուններով սինաշաղթ մի իւր վրան կը կրէ արիշ երկրորդ մ'այլ բոլորովին թեթեւ , ժանեկաւոր զոթացի կամարներով և առնայտաձեւ զարդերով , և այսպիսի դիւրաբեկ նեցուկի մը վրայ կը տեսնուի կարմիր և սպիտակ մարմարեայ թանձր պատ մը , որոյ մարմարեայ շերտքն խաշաձեւ կը կտրեն զիրար իբր գծագրութեան մը մէջ , և լոյս կը ցոյցանեն՝ վերը , դաստակ բարդերու , սքածալք սինակներու , փորրիկ զանգակատներու , դրառանգներու քիւ մը կ'անլատէ երկինքը իւր շրջանակէն , և այս մարմարեայ ու ծաղկազուտած բուսականութիւնն՝ որ կը տեսնուի ճակատներու ծիրանեզոյն և աստափայլին երանգներու վրայ՝ յիշել կու տայ Ափրիկոյ և Ասիոյ կողմերը բուսնող ձոխ հնդկավզենիները , որոնք մէկ տեղ կը խառնեն իրենց սքածալք տերեւները և իրենց ծիրանեզոյն ծաղիկները :

Ներս կը մոնես , և իսկոյն աչացոյ մէջ կը խռնուին ձեւեր . Քանդակածոյ անաղապազնով զրուագուած երկու ջրամբարներու շուրջը , չորս ճակատք կը ներկայացնեն իրենց ճարտարապետութիւնքը և արձանները , ուր կը փայլիին նախկին վերածնութեան բովանդակ թարմութիւնն : Չկայ ինչ մերկ և ցուրտ , ամեն բան քանդակներով և նկարներով լե-

ցում է. գիտնականին և քննադատութեան նրախնդիր պահանջանքն բնաւ չէ կարող աւանդաբանութեան և արքայութեան պատրուակաւ ամփոփել զգալուն հնարագիտութիւնը և աչքերը զբռնեցնելու պէտքը: Այլ որ խոտապահանջ է ի վնեւտիկ, գրոց տուած կանոններու մէջ չի փակուիր, անկարելի է զալ յօրանջի վարմացմամբ մը վիտրովիտի պատուիրած ճակատի մը առջեւ. հարկ է որ ճարտարապետական ձեւագործ մի բոլորովին գրաւէ և զուարճանէ զգացող էակը. զարգերով, օխնականերով և արձաններով կը հիւստի այն, որով և ճոխ և զուարթ կ'ըլլայ: Հոն գետնդուած կը տեսնուին հեթանոս հոկայն Սրէն և Պիտիդոն, և աստուածաշինչի պատկերքն՝ Ալամ և Եւա. հնգետառանցնորդ դարու քանդակագործը հոն կը գրաւգին իրենց քիչ մը դիւրարեկ և իրաւկան մարմինները, իսկ վեշտասանորդի քանդակագործը կը տարածեն հոն իրենց յուզեալ և Ղղաւ կերպարանները: Ռիթմոյ և Սանսովինոյ կը շինեն հոն իրենց սանդղող թանկագին մարմարիտները, իրենց արաքացի նկարուց նուրբ կնածեփերը և զեղեցիկ քմայարգար զարդերը, որ են՝ զրահներ և ճիւղեր, կորճք և պայք, երեսակայական ծաղկունք, շարանճի այծեր, շոպրովիւն մի բանաստեղծական բուռոց և զբոսեցուցիչ ու աստուտող կենդանեաց: Այս իշխանական օտնդողոց վրայէն կ'ելնուի տեսակ մը երկդատութեամբ և պատկառանք, ամենալոյ իւր տիտուր սեւ զգեստին վրայ՝ որ հակապատկերով մի կը յիշեցնէ այն մետաքսաճաճմուկ զաւթաշները, փառաւոր վայրահակ զաղմատական պատամունճանքը, խոյրերը և բիզանդական մոյկերը, աւատապետական փառաւորութիւնները, որոց համար շինուած էին այս մարմարեայ սանդղոց աստիճանք, որոց ծայրը կ'ընդունուի այցելուն Տինտորետտոյի սուրբ Մարկոսէն՝ որ օդոյ մէջ կանգնած է իբր ծեր Էդուարտ մի, և իրեն հետ մէկտեղ երկու վեհ կանայք, Չորոտրիան և Արդարոտրիան, ընկերք զԷդուարտ մը որ կ'ընդունի անոնցմէ հրամանաւորութեան և պատերազմի առջը: Սան-

դղոյն ծայրը կը բացուին տէրութեան և հանդիսի բոլոր նկարագրող արահներն. ուր Տինտորետտոյ, վեբոնացին, Պորդենոնէ, կրսերն Պալմա, Տիտանոս, Բոնիփակիոն և ուրիշ քսան այլք՝ իրենց հրաշակերտներով ծածկեր են որմերը և կամարները, զորս գծագրեցին և զարդարեցին Պալլադիոն, Սկալմոծի և Սանսովինոյ: Քաղաքին բովանդակ հանճարն իւր ամենէն փայլուն ժամանակին մէջ՝ հոս եկեր խմբուեր է՝ հայրենիքը փառաւորելու համար, կանգնելով իւր յաղթանակաց յիշատակարանը և իւր մեծութեան աստուածացուին: Աշխարհիս մէջ չկայ բնաւ այսպիսի յաղթանակ մի. նաւական պատերազմունք, կարապետութիւններն նման ծոած առաջներով նաւք, խոնուած թիկերով ցոլանաւք, որմածակեր՝ օսկից նետերու անձրեւք կը տեղան, կայմերու վրայ ծածանող դրօշք, պատերազմողաց խռովայոյզ խառնուրդք՝ որոնք իրարու կը զարնուին և զիրար կը կլանեն, լիւրիկեցի, սարակինոս և յոյն ամբոխք, արեւէն պղնձագոյն զարձած և կուռն գալանուած մերկ մարմինք, ոսկով սեթեւեթեալ կերպասք, ոսկեզրուալ երկաթեայ զրահք, մարգարտայեւ մետաքս. բոլորովին տարօրինակ խառնուրդ մի դիւցազնական և շուրջ հանդիսից, զոր այս պատմութիւնն տարեր ներկայացուցեր է Չարայէն մինչև ի Դամիատ և ի Պատալիոնէ ի Դարդանէլ, աստ և անպայաքանական դիցունեաց բոլորովին մերկութիւնք. եռանկեանց մէջ Պորդենոնի Առաքիկոտրիանքն, որք են՝ այրական կերպ ունեցող յաղթանաւոր կանայք հերակլեան մարմնով, արեւայինք և զայրացիկութեամբ. ամեն ուրեք սփռուած կը տեսնուի այրական ոյժ, գործօն զօրութիւն, զգայական ուրախութիւն: Եւ իբր նախամուտք այս ակնախառն թափօրին՝ արդի պատկերաց ամենէն ընդարձակն՝ Տինտորետտոյի Արքայադարանն, ութուոն ուրք երկայն և քսանուորս ուրք բարձր, յորում վեց հարիւր կերպարանք կը միտան շիկորակ լուսոյ մէջ, որ հրգեհի մը վառող ծախին կը նմանի:

Շարայարեկի